

# Ա Ն Հ Ա Շ Ը Ը

(Ժողովրդական կեռանձից)

## Ա

Ե... գաւառի ճոխ և փարթամ գիւղերից մինն է  
Ն... գիւղը: Երջապատուած այգեստաններով, գեղեցիկ պտղատու պարտէզներով, խիտ խիտ անտառներով,  
բաղցրահամ և կարկաչուն ազրիւրներով. նա բոլոր շրջակայ բնակիչների համար մի դրախտանման տեղ էր  
համարւում: Գիւղացիների առողջութիւնը, թշերի կարմրութիւնը, առոյգութիւնը, ամենքի մէջ նախանձ էր  
զարթեցնում և շատերը ամառուայ սպանիչ տպրութիւնից ազատուելու համար գալիս էին այդտեղ զով,  
առողջարար, թարմ օդ ծծելու ու համեղ պտուղներ վայելելու:

186... թ. յուլիս ամիսն էր:

Արծաթափայլ լուսինը բաւական բարձրացել էր  
երկնակամարի վրայ և արթուն աբաղազը կանչել էր  
մի անգամ; բայց ամիսով գիւղը գեռ ընկղմնուած էր  
բաղցր քնի մէջ, որովհետեւ օրը կիրակի էր, աշխատանք լը կար: Լուսաստղը գեռ պայծառ կերպով շողում էր  
հորիզոնի վրայ, կարծես նա թռիթում էր ուրախութիւնից, աւետելով լոյսի մօտաւոր գալուստը: Խորին  
լուսութիւն էր տիրում: Հեռաւում երկու ստուերներ եւ  
բեւացին այն մեծ ճանապարհի վրայ, որ բաղաքից  
տանում էր դէպի գիւղը: Եռւտով այդ ստուերները ու-

րոշ կերպարանք ստացան և կարելի էր նկատել երկու ճանապարհորդներ, որոնք քաղաքից ոտքով գիւղն էին գալիս։ Նրանք ընթանում էին յամրաքայլ և կիսախաւարի մէջ գժուար էր պարզ կերպով որոշել նրանց գիւմագծերը։ Շուտով հորիզոնը սկսեց լուսաւորուել և այդ միջոցին ճանապարհորդները բարձրացան մի բլրի վրայ ու այնտեղ կանգ առնելով, գիւտում էին ընութիւնը։

Մի անման առաւօտ էր բացւում։ Արեգակը դեռ դուրս չէր եկել բայց նրա կարմրաշեկ ճաճանչները բոցավառել էին հորիզոնը։ Մեղմ ու պաղ զեփիւոը, տերեւների սօսափիւնը, թռչունների գայլայիկը, հոտաւէտ ծաղիկների բուրմունքը և բնութեան խորհըրդաւոր լոսւթիւնը, ամենապաղարիւն մարդի մէջ անգամ բանաստեղծական խանդ, սէր և ուրախութիւն էին զարթեցնում։ Եւ մեր ուղեւորները զմայլուած էին այն փառահեղ տեսարանով, որ բացուած էր նրանց առաջ։ Արդէն լոյս էր, և այժմ կարելի էր նկատել նրանց գէմքերի վրայ մի խորին մտահոգութիւն։

Նրանցից մինը, մի կարծահասակ ծերունի էր, առողջ և պնդակազմ, նրա ճերմակ մազերը թափւում էին ուսի վրայ և նրա լայն, կնճիւներով ու խորշումներով ծածկուած ճակատը մի անսովոր մտահոգութեան կնիք էր կրում իր վրայ։ Նա իր վշտոտ ու մըռուայլ աչքերը մերթ բարձրացնում էր գէպի երկինք, մերթ բլրի աջ կողմը ձգուած գերեզմանատան կողմը և արտասուրքի կաթիլները թափւում էին և ծեր այտերի վրայից ինում գէպի ալեզարդ միրուքը։ Մերունու այտերի վրայ, որպէս անցեալ առուգութեան մնանցորդ, գեռ երեւում էր թեթեւ կարմրութիւն, իսկ ամբողջ կերպարանքը ցոյց էր տալիս, որ նա ժամանակով մի շատ գեղեցկատեսիլ երիտասարդ է եղել։ Զեռները աշխատաւորի նման կոշտ և պինդ էին, իսկ քայլերը՝ ամուր և հաստատ, չը նայելով իր մեծ տարիքին։ Նա հագնուած էր գիւղական պարզութեամբ, բայց անսովոր մաքրութեամբ և վայելլութեամբ, այնպէս որ ըստ

երեւայթին նա ոչ միայն հասարակ գիւղացիներից չէր,  
այլ գուցէ և զիւղում մի պատուաւոր պաշտօն էր վա-  
րօւմն եւ, յիրաւի, Թօվմաս ապերը — այսպէս էր նրա  
անունը — ոչ միայն իր զիւղում, այլ և քաղաքում և  
ամբողջ գաւառում հաշակուած էր իրրեւ մի արդար,  
խելացի և անաես ձերօնի, բայց իի և նոյն ժամա-  
նակ խիստ և աննկուն բնաւորութեան տէր: Ոզ որ մի  
վէճ, մի կախ ունէր, կամ խորհուրդ ունէր հարցնելու,  
դիմում էր Թօվմաս ապօրը և նա ամենքին դոհ ձա-  
նապարհ էր ձգում: Մինչեւ անդամ նրա հասակակից  
ձերերը նրանից պատկառում էին և զիւղը շատ աղէտ-  
ներից աղատուելու համար նրան էր երախտապարտ:

**Այդ առաւօտ Թօվմաս ապօր կերպարանքից երե-  
ւում էր,** որ մի անսովոր բան յաւզում էր նրա հոգին,  
Յանկարծ նրա մուայլ դէմքի վրայ բարկութեան մի փայլ  
անցու և նա ինըն իրան բացականչեց.

— Ոհ, ինչքան վատ են մարդիկ, ինչքան շար և  
ապականուած են:

Նրա միւս ընկերը, որ մինչև այդ ժամանակ մի  
ահագին գաւազանի վրայ կաթնած լուռ մտածում էր,  
այդ բացականչութիւնը լսելով իր թմրութիւնից սթա-  
փուեց և մի տիսուր նայուածք ձգելով ձերունու վրայ,  
կարծես կամենում էր հարցնել. ինչ է նշանակում այդ  
բացականչութիւնը:

Երիտասարդը 23—24 տարեկան էր և այնքան  
նման ձերնւնուն, որ կասկած չը կար, թէ նրա որդին  
է. նա հօրը հակառակ բարձրահասակ էր, և զեղեց-  
կատեսիլ: Թուխ գանգրաւոր մազերը ծածկում էին նրա  
դլուխը, ճակատը վեհ և լայն էր, թշերից կարծես ա-  
րիւն էր կաթում, ատամները ձիւնի պէս սպիտակ, բայց  
ըիթը փորը ինչ մեծ, իսկ մետարսի նման կակուդ, բարակ  
լնչացքը մի առանձին սիրունութիւն էր տալիս նրա  
դէմքին. վիզը երկար, կուրծքը լայն, ձեռները հաստ,  
զօրեղ և աշխատանքից կոշտացած: Նա փոքր ինչ լաւ  
էր հագնուած. հաստ կաշուի ճանապարհային կօշիկներ

համուռմ էին մինչև նրա ծնկները. նա հագած ուներ մի զանագուղ արխալուղ, վրայից մի սկ մահուդէ չէր քեզկա, մէջքը սեղմած արծաթեայ կամարով և նրանից կախ ընկած մի փոքր գաշոյն. Սակայն առաջին նայուածքով կարելի էր տեսնել, որ նրա ամբողջ կերպարանը վշտով համակուած էր և մի ներքին ցաւ տանչում էր նրան. նա կարծես բոլրովին մոռացել էր բընութեան հրաշալի գեղեցկութիւնը և միայն հօր բացականչութիւնը և գիւղից լուսող զանդակի ձայնը սթափեցրին նրան և նա մի առանձին հիացմունքով դիտեց գեղանկար տեսարանը ու կարծես դրանով սկսիանք դատւ իր ցաւին, որովհետեւ գէմքը պարզուեց:

—Ոհ, ինչ գեղեցիկ տեսարան է, ինչ գեղեցիկ առաւետ է, գոշեց նա:

—Այո, որդի, ասաց հայրը, խաչակնքելով ի լուր զանգակի, և կարծես իր ներքին մոածմունքին պատասխանելով, և այդ անաստուածը այսպիսի գրախոտ ունէր, բայց կորցրեց, այսպիսի բախտաւորութիւնը անտանելի թշուառութեան հետ փոխեց, ոտնատակ տուեց իր պապերի օջախի անունը, պատիւը, քանդեց, աւերեց այդ շեն և ամեն բարիքներով լի հայրենի տունը: Ո՞հ, Աստուած,—և ծերունին նորից խաչակընքեց ու վշտու հայեացըն ուղղելով դէպի այն կողմը, որտեղից զօղանջում էր զանգակը—ոչ մի հայ քրիստոնեայի անառակ, փուչ որդի ըլ տաս, թող աւելի շուտ մեռնի իմ որդին, եթէ նա իմ օջախը նոյնպէս բոռացնելու է, իմ նամուռը ու անունս ցեխի հետ է հաւառ սարեցնելու: Անիծեալ լինեն այդ գինեվաճառները, նրանք մեր ժողովրդի ցեցերն են, քանի քանի տներ քանդեցին:

Եւ ծերունին չը կարողացաւ զսպել արտասուքը:

—Ապեր, ինչ կայ, ինչու այդպէս տխուր էր, միթէ երէկ քաղաքում՝ մի վատ լուր էր իմացել:

—Սարդիս-ջան, որդու հարցին ուղղակի պատաս-

խանելու փոխարէն ասաց հայրը, — երդուիր այսօրուայ անմահ պատարագի վրայ, որ կեանքումք ստրդ գիշեանեւն չի տեսնի, այլապէս ես բեզ իմ որդին չեմ համարի:

— Միամիտ կաց, ապեր, բո հրամանը ինձ համար սուրբ է. ես նրա համար չեմ ուսում առել, որ ժամանակս դինեանը անցնեմ: Այս, երբ կը գայ Արշակը էղը, մենք միստին գործի կենանք: Դու կը տեսնես ապեր, թէ մենք ինչեր կանենք, մենք կը կերպարանափոխնք մեր գիւղը:

— Ասուուած տայ, Ասուուած տայ, որդի, ապրէք. Արշակ-բէղը, յայս ունեմ նորից սորի կը կանգնեցնի իր պապերի օջախը, բայց խեղճ տղայ, նա, երեխ ստիպուած կը լինի կիսատ թողնել ուսումը ու գալ:

— Ինչու, ապեր, ինչ կայ:

— Կարելի է հարցնել ինչու, երբ նրա հայրը Զօհրաբ-բէղն է, այդ անաստուած, անխզնմտանքը: Լսիր, ես բեզ պատմեմ թէ նա ինչ օր է պատրաստել իր մինուճար որդու՝ Արշակ-բէղին և խեղճ աղջկան՝ Առնային:

Երիտասարդը ցնցուեց վերջին անունից, բայց կարողացաւ թագցնել յուզմանքը:

— Դու չատ բան չը գիտես, ինչպէս և Արշակը, բանի որ փորը ժամանակից ձեզ ուղարկեցինք ն... ուսում առնելու: Ինչ մսիթարութիւն պէտք է գտնէ խեղճ տղան, երբ վերադառնայ Մոսկուայից. երանի թէ նա հօրը նման չը մոռանայ իր հայրերի օջախին էհ, լաւ, որ ես բեզ չուղարկեցի Մոսկուա, մեզ պէս հասարակ գիւղացիների համար հայոց հոգեւոր դպրոցում ստացած ուսումն էլ բաւական է. դու չը պէտք է մոռանաս, որ քեզ սպասում են եղն ու լուծը, արտն ու կալը:

Հայր, ասաց Սարգիսը, Արշակի մասին կարծիքդ սիսալ է. նա այն տղաներից չէ, դու կը տեսնես, որ նա հաւատարիւ կը մնայ իր հայրենի օջախին. նա շա-

րունակ ինձ գրում է, յայտնում է իր ծրագիրները.  
նա ամենեւին գոռոզ չէ հօր պէս և նա իրան այնպիսի  
գիւղացի է համարում, ինչպէս մենք:

—Աստուած տայ, Աստուած տայ, որդի, բայց լը-  
սիր պատմութիւնս: Քսան հինգ տարի առաջ, երբ կեն-  
դանի էր մեր մէլիք Սահակը —Աստուած նրա յիշա-  
տակը քաղցր անի —այս մեր գիւղի և ահագին կա-  
լուածների տէրը, մեր գիւղի կեանքը, վիճակը բոլո-  
րովին ուրիշ էր. մէլիքը ոչ թէ կալուածատէր աղայ  
էր, այլ հասարակաց հայր. նա գիւղացիներին խնա-  
մում էր իր զաւակների պէս, շատ բարի էր, ահագին  
բարերարութիւններ էր անում, ոչ ոք նրանից զուլում  
չէր տեսնում, մեծ ու պստիկ սիրում, յարգում էին  
նրան, գիւղում մի հատ անգործ, աղքատ մարդ չը-  
կար: Ախ, ինչքան լաւ էր այն ժամանակ. ո՞ր ջահիլը  
կը համարձակէր իր հօր կամ ծերունիների մօտ նստել,  
գինի խմել, հարբել. մէլիքը կտոր-կտոր կ'անէր նրան:  
Բոլոր ջահիլները նոր հարսերի պէս ամաչկոտ էին. լի  
օրերը աշխատում էին դաշտերում, հանդերում, այգի-  
ներում. տօն օրերը ձիախաղութեան, զինախաղութեան  
յետեւիցն էին. ամեն մինը մի-մի առիւծ էր դաշտում,  
իսկ տանը՝ մի-մի հարս: Ափսոս էն օրեր. էլ չենք տես-  
նելու:

Եւ ծերունին խոր հառաչ քաշեց.

—Դժբախտաբար, շարունակեց նա, մէլիքը և խա-  
նըմը այնպէս խիստ չէին գէպի իրանց մինուճար որ-  
դին, այդ վշացած Զօհրաբ-բէդին. պէտք է ասել, որ  
Զօհրաբն այդ ժամանակ մի լաւ և բարի տղայ էր,  
գիւղի միւս տղերանց նման, աշխատող, ժրաշան, հնա-  
զանդ: Աստուած հոգին լուսաւորի, շատ խելօք մարդ  
էր մէլիք Սահակը, թէե ինձ պէս անուսում էր, բայց  
շատ հեռատես էր: Որդուն ուղարկեց Թիֆլիս ուսում  
առնելու, ասում էր, հարկաւոր է ժամանակի հետ գնալ:  
Զօհրաբը գնաց, երեք չորս տարի մնաց Թիֆլիսում, իբր  
թէ ուսում էր ստանում, բայց գու մի ասա մեր տղան

ընկերում է փշացած բէդղաղաների ընկերութեան մէջ և ուսում առնելու փոխանակ իրան տալիս է բէֆի, զոււրճութեան, անառակութեան, նա սովորում է թուղթ խաղալ, նոր տեսակի խմիչքներ գործածել, հօրից թարուն մեծ մեծ պարտեր անել, երբ մէկիքը իմացաւ բանի էռութիւնը, արդէն նա փշացած էր, նրան յետ բերեց գիւղը, այսակեղ ևս նա հնար գտաւ շարունակել իր անառակ կեանը, նրա յետեւից մեր գիւղը մուտք գործեցին նոր տեսակի խմիչքներ—կօնեակ, բօմ, շամպայն, որ թարուն ծախում էին մի բանի գիւնեվաճաներ Զօհրաբ-բէգի օգնութեամբ, ինըն էր ստիպում նրանց բերել տալ Թիֆլիսից արդ խմիչքները, գիշերները նաև մի բանի իր ընկեր ուրիշ բէդղաղաները գալով այդտեղ, հաւաքում էին և թարուն թուղթ խաղում, անառակութիւններ անում Խեղճ մէլիքը խըրատեց, պատեեց, լացեց, անիծ շեղաւ..., մայրը վաղուց դարգից գերեզմանն էր իջելու Մէլիքը կարծեց, որ եթէ Զօհրաբի գլուխը կապի, ամուսնացնի գուցէ խելքի գալ, մարդ գառնայ, նա պսակեց նրան մէլիքը Ռոտամի սիրուն աղջկայ, Հոփիսիմէի հետ Միքանի ժամանակ Զօհրաբը իր անպիտան վարմաններից յետ կացաւ, բայց հենց որ մէլիքը մեռաւ, իրան ազատ զգաց, դարձեալ սկսեց իր նախկին կեանքը, Խեղճ մէլիքը, մեռնելիս, ազատում, պազատում էր ինձ, առելով, «Ես գիտեմ, Թօվմաս, որ խեղճ հարսս, Հոփիսիմէն և թոռնս, Արշակը, Նեղութիւն են քաշելու, դոնէ դու մի թողնիր նրանց, օգնիր նրանց»:

Մերունին զգացուած այս յիշողութիւններից, որբ-րեց արտասուբը, ապա յարեց,

—Ախ, իներ չը բաշեց խեղճ և անբախտ Հոփիսիմէն Զօհրաբ-բէգի ձեռքից, որ չէր լինի, որ խեղճ կնկան ը ձեծէր, նա հարբած գալիս էր տուն, կատաղում գաղանի նման, կին, ծառայ, աղախին, ամենքը ենթարկւում էին նրա հայհոյանըներին, ամենքին թակում էր, շան շարչարանը էր տալիս Միւս կողմից, երբ

մեր կողմերում նոր կարգերն ու օրէնքները մտցրին,  
օրինաւոր ուսում չունենալով, նա մնաց շշկուած, չը հաս-  
կացաւ ինքն իրան հաւաքել և ամեն բան թարս գնաց:  
Նա իր բոլոր ունեցած չունեցածը կերաւ, գրաւ գրեց  
թղթախաղում. բարեհոգի մարդիկ էլ շատ կային, որ  
մի բաժակ բոմը կամ կոնեակը մի այգու էին ծախում.  
շուտով դիւզն էլ գնաց, ջաղացներն էլ այգիներն էլ,  
ու մալ և ամեն բարութիւններով լի, շէն օջախը բան-  
դուեց, աւերուեց. մնաց միայն այս քարաշէն տունը,  
որի մէջ այժմ՝ ապրում է ինքն ու իր աղջիկ Սօնան:  
Դեռ լաւ է, որդուն, Արշակ-բէգին ուղարկեց Յ... Հա-  
յոց թեմական գպրոցը և այգտեղ աւարտելով, նա  
գնաց Մոսկուա ուսումն շարունակելու: Աստուած տայ  
նա իր պապի օջախը շէնացնի, վառ պահի, թէկ ինչ է  
մնացել. Խեղճ Հոփիսիմէ խանըմը, քանի-քանի անգամ,  
իր աղջկան՝ Սօնային՝ գրկն փափել, եկել է մեր տուն,  
մարդի ձեռքից. նա մոմի նման հալում էր օրէցօր, էլ  
չը դիմացաւ, երբ այդ անաստուածը տան կահ կարա-  
սիքն ևս սկսեց ծախել, և գերեզման մտաւ: Տեսնում  
ես, ահա, այդ անշուք գերեզմանը. ահա այդտեղ է  
հանգստանում իր վշտերից այդ անմեղ հրեշտակը. մի  
բարի անգամ չարժանացաւ....:

**Ծերունին մի փոքր լուեց ու շարունակեց.**

— Ասիծեալն իր աղջկան ևս չը խնայեց, խեղճ Սօ-  
նային:

Այս անունի վրայ Աարդոի վրդովմունքը սաստկա-  
ցաւ:

— Խեղճ Սօնա, շարունակեց ծերունին, գեռ չը  
դիտես, թէ էգուց քեզ ինչ ձախորդութիւն է սպասում:

— Հայր, ասաց Աարգիսը, այլ ևս չը կարողանալով  
զսպել յուզմունքը, էլի՞ մի նոր ձախորդութիւն է պա-  
տահել:

— Ոհ, Աարգիս-ջան, ինչ անեմ. այդ անիրանէ ի-  
րան երեխային ևս չը խղճալով, հարբած ժամանակ  
տանել է տուել թղթախաղում մեծ գումար, մուրհակ

է տուել և ահա այս երկու օրը գատառանական պը-  
րիստաւը գալու է տանը աճուրդի գնէ. ծախէ ու հօրը  
աղջկան տնից գուրս անէ. ինքն բարը գլուխը, բայց  
ինչ պէտք է անի թշուառ աղջիկը, ում դռները ընկնի.  
—Բայց ինչ եղաւ քեզ, արդեօք ինչ ունես.

Հօր այդ լուրի վրայ, երիտասարդի ձնկները կը ծ-  
կուել էին, նա գունաթափուել էր և անշուշտ կ'ընկ-  
նէր, եթէ մահակի վրայ կաթնած չը լինէր. հօր ներ-  
կայութիւնը զսպում էր նրան և նա տիսուր ձայնով ա-  
սաց.

—Ոչինչ չը կայ, ապեր, մի քիչ գլուխս պատուեց.  
շուտ գնանը, մայրս հիմա անհամբեր սպասելիս կը լի-  
նի...

Մերունին վաղուց գիտէր, որ Սարգիսը և Սօնան  
միմեանց սիրում են, որ իր կինը փափագում էր Սօ-  
նային իրանց տանը հարս բերել, բայց նա գիտէր, որ  
Զօհրաբ-բէզը երբէք համաձայնութիւն չի տայ, որ իր  
աղջիկը հասարակ գիւղացու հարս գառնայ. միւս կող-  
մից ևս նրա կանոնում չը կար որդու երեսը բացել,  
ուստի բաւականացաւ ասել.

—Աստուած ողորմած է, որդի, նա չի թողնի Սօ-  
նային ուրիշի գոներին Գնանը:

Եւ երկուսն էլ, անձնատուր եղած իրանց մոտած-  
մունքներին, ճանապարհ ընկան լուռ ու մունչ և մին-  
չեւ գիւղը հասնելը ոչ մի խօսք չարտասանեցին այլ ևս  
թովմաս ապերը ուղղակի գնաց եկեղեցի, իսկ Սարգիսը  
շտապեց մօր մօտ՝ հաղորդելու նրան տիսուր լուրը:

## Բ

Կայծակի արագութեամբ ն... գիւղում տարածուեց  
այն լուրը, թէ մէլիք Սահակի նշանաւոր օջախի վեր-  
ջին մեացորդը, այն բերգանման տունը, որ այնքան  
աղէտների, արհաւիրքների գիմացել էր պարսկական  
տիրապետութեան օրերում և գիւղացիների համար մի

տեսակ սրբավայր կամ օջախ էր նկատւում, պէտք է աճուրդով ծախուի: Գիւղի ծերունիները և պառաւ կանայք այնքան շատ և լաւ յիշողութիւններով կապուած էին մէլիք Սահակի օջախի հետ, որ նրանց սիրտը ճըմ լուեց ցաւից: Ծերունիները, պատարագից յետոյ, եկեղեցու բակում, մտածում էին մի կերպով փրկել այդ թանկադին լիշտատակը:

—Ով փուչ աշխարհ, ասում էր Գիւղի ապերը, ինչ էր երէկ մէլիք Սահակի օջախը, ինչ է այսօր: Տուն չէր, այլ բարիքների ծով էր, ծով, և ով կարող էր կարծել որ այդ ծովը կը չորանայ:

—Դրա համար են ասել աթա բարա, որ թշնամուն էլ մարդ չը պէտք է ցանկանայ փուչ ժառանգ:

—Քարը նրա գլուխը, ասաց Մարտիրոս ապերը, բայց խեղճ են նրա որդին և աղջիկն. նրանց համար պէտք է մոտածել: Ասում են, բէդզադէն շատ լաւ տըզայ է և լաւ ուսում է ստանում և նա կարող է պապի հանգած օջախը վառել: Պէտք է մի կերպ իմաց տալ նրան. կարելի է ոչ մի բանից տեղեկութիւն չունի, գուցէ գայ և մի ելք, հնար գտնի. բաս ո՞ր օրուայ համար է ուսումը: Իսկ խեղճ աղջկան, Սօնային, քանի որ մայր չունի, հայրն էլ արբեցողութեամբ և թղթախաղով է զբաղուած, պէտք է ազատել այդ տնից. լաւ էլ չէ ջահիլ ջահիկը մնայ իր հօր տանը, որտեղ ոչ մի մօտ կնիկ արմատ չը կայ: Եւ մի բան եմ լսել. Աստուած տայ որ գըուստ լինի. մեր տնեցիները ասում են, որ Սօնան և Սարգիսը ստեղծուած են մէկ մէկու համար: Էլ ինչու ենք ուշացնում: Սօնային առնենք Սարգսի համար և խեղճ աղջիկը Հերիքնաղ աքօր պէս մայր կունենայ: Ի՞նչ ես ասում, Թովմաս—վերջացրեց ծերունին դառնալով վերջինիս:

—Աստծուն էլ յայտնի է, որ ես և մեր պառաւը, Հերիքնաղը, մեծ բախտաւորութիւն կը համարէինք մէլիք Սահակի օջախից մի խանձուղ բերել վառել մեր օջախը, բայց միթէ չէք իմանում, որ Զօհրաբ բէգը այդ

բանին չի համաձայնի. նա պատրաստ կը լինի վերջին  
աղքատին, վերջին ամենափշացած մարդուն տալ իր  
աղջիկը, եթէ նա բեգզագէ է. նա երբէք չի համա-  
ձայնի իր աղջկան տալ գիւղացուն:

— Բայց Սարգիսը ռւսում առած, շնորհով տղայ է.  
Բնչու չը պէտք է տայ. վերջապէս Սարգիսը կարող է  
գնալ ծառայութեան մանել, չինօթիկ գաճանալ, գիւ-  
ղացի չը մնար:

— Աստուած մի արացէ, բարկացած շեշտով ասաց  
թովմաս ապերը. Սարգիսը պէտք է իր հօր ու մօր  
նաման գիւղացի մնայ, մեր օջախը վառ պահէ. գիւ-  
ղացի էլ պէտք է մեռնենք, իմ տղան պէտք է պա-  
հէ այն հողը, որ իր պապերը, հայրը՝ իրանց բրտինքով  
ոզողել են. Սարգիսն ինքն էլ ամենեւին սէր չունի  
բաղաբացի գառնալու. նա ասում է գիւղացին կրթու-  
թիւն ստանալով պէտք է իր գիւղում մնար:

— Գործը, ուրեմն, մի բիչ դժուարանում է, թովմաս  
ապեր, ասաց 40 տարեկան մի համիս գիւղացի. բայց  
էլի պէտք է փորձել, գուցէ Աստուած յաջողեց: Ես  
կարծեմ: շատ լաւ կը լինի, որ հէնց հիմա դու և տէր-  
տէրը գնաք Զօհրար բէգի մօտ խնամխօսի և տէրտէրը  
թող հասկացնի նրան, թէ ինչ կը լինի Սօնայի վիճակը,  
եթէ տունն էլ ծախեն: Բան է, նա յամառուեց, չը հա-  
մաձայնեց, պէտք է այն ժամանակ իմաց տալ որդուն,  
Արշակ բէգին, որ գայ, իսկ մինչ այն, պէտք է չամա-  
յաթ ով խնդրել Մկրտիչ Խօջայից, պարտատէրից, որ  
մի առժամանակ յետաձգէ տօւնը ծախելը, մինչեւ Ար-  
շակ բէգը վրայ հասնէ:

— Աստուած խղճմանը տայ Մկրտիչ Խօջային, այդ-  
անիրաւը ծծեց ամինղջովին խեղճ մէլիքի տուն-տեղը,  
էլ բան թողեց, հիմա էլ աչքը տնկել է կիսաքանդ-  
տան վրայ:

— Դէ գնացէք, այսօրուայ սուրբ պատարագը ձեզ  
օգնական լինի:

Թովմաս ապերը և տէրտէրը ուղղեցին իրանց բայ-

լերը գէպի Մէլիքանց հինաւուրց տունը, կամ օջախը,  
ինչպէս ընդունուած էր ասել:

Առաջին տեսքից կարելի էր կարծել, որ հինաւուրց  
տունը, արդարեւ, մի բերդ է եղել, բայց ժամանակից  
կամ թշնամու յարձակումներից այնպէս քայլայուած և  
աւերուած, որ գուար էր կարծել, թէ նա մարդաբնակ  
է: Ընդարձակ բակը, ուր մտան թովմաս ապերը և քա-  
հանան, որդերից կրծոտուած և մի կրնկան վրայ ճըռ-  
ճըռացող մեծ դռնով, կատարեալ ամայութիւն էր ներ-  
կայացնում: Նրա մի մասը միայն կոխոտուած գետին  
էր ներկայացնում, իսկ չորս կողմը ծածկուած էր ան-  
պէտք բանջարներով և որոմներով. մի քանի կիսաշո-  
րացած ծառեր էլ տիսուր տիսուր նայում էին և կար-  
ծէք զարմանում, որ իրանց գեռ չեն կտրել վառել-  
Բակի մի ծայրում, արդէն գտած և կործանուած փայ-  
տեայ ցանկապատի մօտ աեմնում էր մի ջրհոր, նոյն-  
պէս կիսակործան չարխով և ժանդոտած սառինջով  
(Ջրի դուլ): Հնութիւն, անկենդանութիւն, ցրտութիւն  
էր փշում այդ բակից, թէ և ամառային պայծառ և տաք  
արել ամեն տեղ կենդանութիւն և ջերմութիւն էր  
տարածում: Տնկահան եղած քարէ սանդուխներով թով-  
մաս ապերը և տէրտէրը մտան տան էյվանը, ուր մի  
պառաւ կին, տան սպասուհին, մի ժանդուա կաթսայի  
մէջ բրինձ էր լուանում: մի օջախի վրայ ևս մի մեծ  
կաթսայում ջուր էր եռում և մի գիւղացի տղայ երկու  
երեք միրհաւ փետրահան էր անում:

Տեսնելով քահանային և թովմաս ապօրը, պառաւը  
փերկացաւ և, քէթկալը բարձրացնելով, մօտեցաւ տէր-  
տէրի աջը առնելու:

—Օրհնեալ լինիս, Շուշանաքեր, բէգը տանն է.  
Երկի այս միրհաւերը ինքն է որսից բերել:

—Ոչ, տէրտէր, էն փուչ եգան բէգն է ուղարկել,  
որ փլաւ եփենք, որովհետև իր ընկերների հետ գալու  
է թուղթ խաղալու: Տէրտէր, ախր երբ է խելքի գա-

լու, բաս մարդ տանը հասած նշանացու աղջիկ կունենայ էլի կը շարսնակի իր փառթիւնները, խեղճ աղջիկը դարդից հալ ու մաշ է եղել Արշակ-աղան էլ չի գալիս, նա է մասցել մեր միակ յոյսը, ես էլ մի ոտոգերեզմանում, եթէ էսօր էզուց մեանեմ, էլ այտէր, տիրական պէտք է լինի խեղճ Սօնային:

—Լաւ, լաւ, Աստուած ոզորմած է, նուշան-արեր, գու այն ասա, ի՞նչ է անում Զօհրաբ բէդը. մենք խէր բանի համար ենք եղել,

—Աստուած յաջողեցնի, իմ սիրտս հէնց զգաց երբ ներս մտաբ. հանգուցեալ Հափսիմէ խանըմիս փափագն էլ այն էր, որ Սօնայի և Սարդսի բախտերը միացնէ. վերջապէս խեղճ Սօնաս՝ մի բախտաւոր օր կը տեսնէ, բայց կը համաձայնի Զօհրաբ բէդը:

—Բարձրացէր, նա թալարում նստած, շիրուխ է բաշում ու կօնեակ խմում:

Տէրտէրը ու Թովմաս ապերը բարձրացան խարիսուլ ու ոտնաբայլերի տակ ճարճատող փայտեալ սանդուխներով ու մտան թալարը. Դա մի մեծ, լայն սրահ էր պարսկական փէնջարէներով և պարսկական ճարտարապետութեան զարդարուագներով. տեղ տեղ ոսկեզօծ դրուագները սեացել էին և քանդուել, առաստաղի վրայ ևս կտուրից թափած անձրեի կաթիլները հետքեր էին թողել. Մի բանի տեղ, պատուհաններում, նոր կարկատաններ էին երեւում և ամրող սրահը ներկայացնում էր հնի և նորի մի խառնուրդ. կոպիտ կարկատաններ, անհմուտ կերպով լցրած ծակ ու ծուկեր, հին փառքի, ճոխութեան, շոայլութեան բեկորներ ու աղբատութեան ապացոյցներ, ինչպէս և նորագոյն բազարակրթութեան նշաններ. Թալարի յատակը փռուած էր հնացած, խաւը բոլորովին կարցրած գորգերով, ճղուտուած կարպետներով և նոյն-իսկ խսիրով:

Սեացած և տեղ տեղ զառ բանդակագործական զարդերը պահպանած պատերի վրայ կախ էին տուած

բաղմաժիւ մտրակներ, մի քանի հրացան, ատրճանակ, թրեր, վառօդամաններ։ Թալարի առաջ ընկած պատշգամբի փայտեայ սիւներից կախուած էին երեք մեծ վանդակ, որոնց մէջ մի բազէ և երկու թարլան թռչուն իրանց գիշատիչ գէմքերով և ոտներին կապած զանդակիկների զօդանշիւնով կարծես կամենում էին հասկացնել մանողներին, թէ պատրաստ են նորից միրհաւներ, կաքաւներ որսալու։

Փէնջարանների առաջ մի քանի որսկան թազիներ մրափում էին և նրանց մօտ գրուած էին փայտեայ ամաններ, կերակրի մացցորդներով։

Սյդ մտրակները, վառօդամանները, այդ բազէները և որսկան չները ապացոյց էին թէ առնտէրը հաւատարմութեամբ պահպանում է այն աւանդութիւնը, որի համաձայն բէգերի և մէլիքզադանների միակ աղնիւ պարապմունը համարւում է որսորդութիւնը ու ձիասպատակութիւնը։

Տանտէրը, Զօհրաբ բէգը, մօտ 45 տարեկան մի տղամարդ էր ալքօհօլականութեան ընտելացածի բոլոր նշաններով. նրա նայուածը, շարժումները խոժոռ էին և հրամայողական. նա այդ բոպէին նմանում էր այն մարդին, որ բարկացած իրան հասած որ և է անաջողութեան կամ ձախորդութեան վրայ, առիթ է որոնում մէկի գլխին թափելու իր դառնացած հոգու բոլոր մաղձը։

Տեսնելով բահանալին և թովմաս ապօրը նա խոժոռեց գէմքը և նրանց բարեին, գլխի թեթև շարժումով հաղիւ պատասխանեց, ու ձեռքով նշան արեց, որ նստեն գորդի վրայ, ապա դժկամակ ձայնով հարցրեց։

—Հը, ինչ կայ, որ խաչիցն է, որ ինձ մտներդ էք ձգել, ուրախացել էք հա, որ այս տունը ձախուելու է. ես շատ լաւ գիտեմ, որ դուք միայն ուրախանալ կարող էք. գիւղացին երբ չէ ուրախանում, տեսնելով բէգերին հասած ձախորդութիւնը։

—Աստուած շանէ, որ մենք ուրախանանք մէլիք

Սահակի օջախին հասած դժբախտութեան վրայ, բէդ,  
ասաց ծերունի Թռվմասը. գուք ձեր հազու վրայ մեղք  
էք աւելացնում. ընդհակառակը ամրազ գիւղը խոր  
ցաւ է զգում. միթէ այսօրն էլ պէտք է տեսնէինք, որ  
մէլիք-Սահակի վերջին օջախը քարուքանդ լինի և նրա  
յիշատակը չնծովի այս գիւղից.

—Քեզ ի՞նչ, ես գիտեմ իմ հօր առւնը, իմ ժառան-  
գութիւնը. այդ էք մնացել, որ բնծառա գիւղացիներն  
ևս խղճան ինձ: Եթէ հայրս, մէլիքը, ձեզ այդքան երես  
տուած չք լինէր, այսօր բաները արտեզ չէին հասնի.  
Նրա անխելքութեան չնորհիւ դաք, բնծառա գիւղացի-  
ներգ, մալ ու ապրանքի. հաղի այդու տէր էք դարձել  
և այսօր էլ համարձակում էք ինձ խրատներ կարգալու  
Բայց սպասեցէք, շատը գնացել քիչն է մնացել. թող  
տղաս, Արշակ բէդը դայ, շնուվլիկ դարձած, ես ձեզ  
ամենքիդ ցոյց կը տամ. թէ սվէ բէդը, սվէ գիւղացին.

—Օրհնուած, ասաց լրջօրէն քահանան, այդ տարի-  
բումդ գեռ էլի չես խրատուել. հայրգ, մէլիք-Սահակը—  
Աստուած հոգին լուսաւորի, նա մեզ պահպանում էք:  
Իբրև իր զաւակներին Բայց այդ թօղնենք, բէդ, մենք  
այսօր եկել ենք, այս հին մեր օջախից մի կրակ տա-  
նենք մեր օջախը վասենք, այս հին այգուց մի պառազ  
տանենք, մեր այգին պաղաքերենք. ընդունիր մեր  
ինդիրը. Միթէ գիւղացի լինելով մենք մարդիկ չենք,  
որ շարունակ մեզ նախատում ես. մենք մեր ճակատի  
հալալ բրախնքավ, մեր այխատութեամբ պահում ենք  
մեր ընտանիքը, տունը Յիշիր, որդի, ինչպէս էր վար-  
ւում մեզ հետ ողորմածահոգի հայրդ:

—Չեմ հասկանում, ինչ էք ուզում, ասացէր շու-  
տով տեսնեմ:

—Թովմաս ապերը եկել է Սօնային իր որդի Սար-  
գսի համար հարս ուզելու.

Զօհրաբ բէդը յանկարծ տեղից ցատկեց խայթուա-  
ծի պէտ:

—Ի՞նչ, ի՞նչ, պառաց նա, իմ աղջիկս, Սօնային, մէ-

լիք-Սահակի թոռան, դուք համարձակում էք ուզել՝ մի հասարակ, քնծողոտ գիւղացու համար Այս, Աստուած, այս խայտառակութեան, անպատճութեան էլ արժանացրիր ինձ:

Եւ նրա աչքերը բարկութեամբ շողացին:

Թովմաս ապերը և բահանան ոտքի կանդնեցին:

—Զօհրաբ բէդ, ասաց առաջինը, դու սիսալում ես. այդ քնծողոտ, հասարակ գիւղացին, որ իր հալալ աշխատանքով ապրում է, ամենեին պակաս չէ այն բէդ-զադաներից, որոնք փշացնում են իրանց հայրերի աշխատածը: Դու զուր ես աքացի տալիս քո աղջկայ բախտին. Սօնան աւելի բախտաւոր կը լինի իմ տանը, քան այստեղ: Մի իրան էլ հարցրու տես ինչ կասի:

—Իմ աղջիկս, Սօնան, կարծում ես կը համաձայնի գիւղացու կին դառնալ, տիսմար ծերուկ, սպառնալից մօտեցաւ Թովմաս ապօր Զօհրաբ բէգը: Նատ սիսալում ես, քո տղան կարող է միայն իմ աղջկայ սպասաւորը լինել, իսկ եթէ նա, Աստուած մի արասցէ, այդ տեսակ բան ցանկանալու լինի, ես նրան այս իմ ձեռքերով, կտոր կտոր կանեմ: Դուրս կորէք այստեղից, էլ իմ տան շէմքս չը կոխէք:

—Հա, հա, հա, բրդշալով դիմեց նա այդ միջոցին թալարը մտնող մի քանի նոր հիւրերի. լսիր, Եգան-բէդ, լսել ես կեանքում այսպիսի յանդկնութիւն. իմ հօր երէկուայ բէգառը եկել է այսօր իմ աղջիկն ուշղում է իր տղի համար. քնծողոտ, տրեխաւոր գիւղացին համարձակում է աչքը տնկել բէդի աղջկայ վրայ: Ի՞նչ էք ասում:

—Այդ լրբութիւն է, կատարեալ լրբութիւն. բէգի աղջիկը ինչպէս կարող է գիւղացու կին դառնալ, պատասխանեցին բէգերը:

—Բաւական է, բաւական, ասաց Թովմաս ապերը, գնանք, տէրտէր: Ճշմարիտ է, գիւղացին ով, բէգն ով. գնանք մենք մեր արտը բաղահան անելու, իսկ բէգերը և բէգզադաները թող ուրաղ խմեն, թուղթ խաղան,

որսի գնան։ Խեղճ Սօնա, ափսսս մէլիք, ո՛ւ այսպիսի  
փուշ ժառանգները քա տեղը բռնեցին։  
—Կորիր աչքիցս, պոռաց Զօհրաբ-բէղը,  
Ցէրտէրը և Թովմաս ապէրը ախուր-ախուր ցած  
իջան։

—Խեղճ Սօնա, խեղճ Սարդիս, լացակամած տասց  
նուշան աքերը և խոր հառաջեց։

## ՇԱՀԲԻԱՐ

(Վերշը միւս համարում)